



Մարդկային զարգացման  
միջազգային կենտրոն  
International Center for  
Human Development

a t h i n k t a n k

WWW.ICHD.ORG

# Սիրիայից տեղահանված կանայք փնտրում են անվտանգ ապաստան Հայաստանում

Հետազոտական արդյունքների հաշվետվություն

Հաշվետվության հեղինակ՝ Արտակ Սաղաթեյան  
Հետազոտական աշխատանքների ղեկավար՝ Աննա Փոխարարյան

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

Երևան, Սայաթ Նովա 19

Հեռ.՝ +374 10 582638

Ֆաքս՝ +374 10 527082

Էլ. փոստ՝ [think-tank@ichd.org](mailto:think-tank@ichd.org)

[www.ichd.org](http://www.ichd.org)



**UNHCR**  
The UN Refugee Agency

Սույն հրատարակությունը ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի (ՄԱՓԳՀ) գրասենյակի հրատարակությունը չէ: ՄԱՓԳՀ-ն պատասխանատու չէ սույն հրատարակության պարունակության համար և պարտադիր չէ, որ տված լինի իր համաձայնությունը դրա վերաբերյալ: Բոլոր արտահայտված մտքերը հեղինակներին են և պարտադիր չէ, որ արտացոլեն ՄԱՓԳՀ, ՄԱԿ-ի կամ դրա անդամ պետությունների կարծիքները:

# Բովանդակություն

|   |           |
|---|-----------|
| <b>1 Հետազոտության խնդիրները .....</b>                        | <b>4</b>  |
| 1.1 Խնդրի կարևորությունը.....                                 | 4         |
| 1.2 Մեթոդաբանություն.....                                     | 4         |
| 1.3 Որակի վերահսկողություն .....                              | 5         |
| 1.4 Սահմանափակումներ .....                                    | 5         |
| 1.5 Քանակական հարցում.....                                    | 5         |
| 1.6 Որակական հարցում.....                                     | 6         |
| <b>2 Եզրակացություններ .....</b>                              | <b>7</b>  |
| 2.1 Քանակական հետազոտություն .....                            | 7         |
| 2.1.1 Ընդհանուր տեղեկություններ ընտանիքների մասին .....       | 7         |
| 2.1.2 Բնակության վայրը.....                                   | 7         |
| 2.1.3 Սիրիայից ներգաղթելու ուղին .....                        | 8         |
| 2.1.4 Զբաղվածությունը.....                                    | 8         |
| 2.1.5 Ծախսերը.....  | 10        |
| 2.1.6 Ծառայությունների հասանելիությունը .....                 | 11        |
| 2.1.7 Սեռական բռնություն .....                                | 13        |
| 2.1.8 Ընտանեկան բռնություն.....                               | 15        |
| 2.2 Որակական հարցում.....                                     | 17        |
| 2.2.1 Կրթություն .....  | 17        |
| 2.2.2 Աշխատանք.....   | 19        |
| 2.2.3 Հայաստանում առկա ծառայությունների հասանելիությունը..... | 20        |
| 2.2.4 Սեռական բռնություն .....                                | 22        |
| 2.2.5 Ընտանեկան բռնություն.....                               | 22        |
| <b>3 Եզրահանգումներ.....</b>                                  | <b>24</b> |
| 3.1 Քանակական հարցման արդյունքներ .....                       | 24        |
| 3.2 Որակական հարցման արդյունքներ .....                        | 25        |
| <b>Հավելված 1 .....</b>                                       | <b>27</b> |
| <b>Հավելված 2.....</b>  | <b>33</b> |

# Նախաբան

ՄԱԿՓԳՀ-ի՝ ՄԱԿ-ի փախստականների հարցերով գործակալության մանդատն է միջազգային մակարդակով պաշտպանություն ապահովել փախստականների համար և աջակցել պետություններին՝ մնայուն լուծումներ գտնելու նրանց համար: Այս մանդատը, որը ժամանակի ընթացքում ընդլայնվել է՝ ներառելով այլ տեղահանված բնակչության պաշտպանությունը և քաղաքացիությունից զրկված լինելու կանխումն ու նվազեցումը, ունի բազմաթիվ ուղղվածություններ, որոնք բոլորը մեկ ընդհանուր նպատակի են ծառայում, այն է՝ խնդրո առարկա անձանց նկատմամբ հարգանքի խթանումն ու նրանց իրավունքների պաշտպանությունն ու իրացումը: Իր աշխատանքներն իրականացնելիս ՄԱԿՓԳՀ-ն ուղղորդվում է մարդու իրավունքների, ինչպես նաև «տարիքի, գենդերի և բազմազանության նկատմամբ զգայունության» վրա հիմնված մոտեցումներով:

ՄԱԿՓԳՀ-ի՝ պաշտպանությանն ուղղված աշխատանքների ուղղություններից մեկը, որն արժանի է հատուկ ուշադրության, տեղահանված կանանց, աղջիկների և տղաների պաշտպանությունն է: Պաշտպանությանն ուղղված յուրաքանչյուր քայլ և նախաձեռնություն պետք է հիմնված լինի իրավիճակի և խնդրո առարկա բնակչության պաշտպանության խնդիրների հստակ և խորը ըմբռնման վրա: Իրավիճակի՝ նման խորը ըմբռնումը միշտ չէ, որ դյուրին է, մասնավորապես տեղահանման վաղ փուլերում և, առավել ևս, երբ այն վերաբերում է այնպիսի նուրբ խնդիրների, ինչպիսին են հոգեբանական խանգարումները կամ սեռական և գենդերային բռնությունը: Սիրիայից տեղահանված և Հայաստանում ավելի ու ավելի շատ պաշտպանություն փնտրող ընտանիքների, կանանց և երեխաների իրավիճակի վերաբերյալ ավելի փաստարկված և հիմնավոր պատկերացում կազմելու համար ՄԱԿՓԳՀ-ն դիմել է Հայաստանում գործող հեղինակավոր գիտահետազոտական կենտրոնի՝ «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն»-ի մասնագիտական աջակցությանը: Մենք վստահել ենք կենտրոնի հետազոտական խմբին գնահատելու այն տարաբնույթ կարիքները, խնդիրները հաղթահարելու կարողությունները, ռիսկերն ու մարտահրավերները, որոնց այդ ընտանիքները, մասնավորապես՝ կանայք ու երեխաները դիմակայել և դիմակայում են Սիրիայից դեպի Հայաստան իրենց թռիչքից առաջ, ընթացքում և հետո:

2011թ. հակամարտության սկզբից ի վեր ավելի քան չորս միլիոն սիրիացիներ դարձել են ներքին տեղահանվածներ, իսկ ավելի քան 2,4 միլիոնը գաղթել է շրջակա երկրներ՝ փախչելով բռնություններից<sup>1</sup>: 2014թ. սկզբի դրությամբ Հայաստանի Հանրապետությունը ապաստան է տրամադրել Սիրիայից տեղահանված ավելի քան 11000 անձանց:

ՄԱԿՓԳՀ-ի հայաստանյան թիմը հույս ունի, որ այս գեկույցը ոչ միայն կօգնի ավելի լավ հասկանալ տեղահանված ընտանիքների, մասնավորապես՝ կանանց և երեխաների կեցությունը, այլև կխթանի կոնստրուկտիվ և մասնագիտական քննարկումներ բոլոր հիմնական շահագրգիռ կողմերի միջև, որոնք են Հայաստանի Հանրապետության կառավարությունը, ՄԱԿ-ի տարբեր կառույցները (ինչպիսիք են ՄԱԿՓԳՀ-ն և ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը) և նրանց գործընկեր կառույցները, տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունները, հանրությունը՝ նպատակ ունենալով հետագայում ավելի գործուն և արդյունավետ կերպով արձագանքել տեղահանված ընտանիքների բացահայտված կարիքներին ինչպես նաև ինտեգրման հիմնական խնդիրներին:

Քրիստոֆ Բիերվիլթ  
ՄԱԿՓԳՀ ներկայացուցիչը Հայաստանում

<sup>1</sup> ՄԱԿ ՓԳՀ, Syria Regional Refugee Response, <https://data.unhcr.org/syrianrefugees/regional.php> [25 հունվար, 2014թ.]

# 1 Հետազոտության խնդիրները

## 1.1 Խնդրի կարևորությունը

Սիրիայի հակամարտությունը ստիպել է լքել երկիրը ավելի քան երկու միլիոն անձանց, այդ թվում՝ սիրիահայերին՝ Միջին Արևելքի ամենանշանակալի քրիստոնյա համայնքներից մեկին:<sup>2</sup> Ավելի ու ավելի շատ թվով սիրիահայեր են ապատան գտնում Հայաստանում: Ըստ Հայաստանի Հանրապետության (ՀՀ) սփյուռքի նախարարության տվյալների՝ ներկայումս Հայաստանում բնակվում է շուրջ 11000 սիրիահայ:<sup>3</sup>

Սիրիական հակամարտության համատեքստում սեռական և գենդերային բռնությունն առանձնացվել է որպես հակամարտության ամենասակնառու բնութագրիչներից մեկը:<sup>4</sup> ՄԱԿ ՓԳՀ Հայաստանը հանձնարարել է իրականացնել հետազոտություն Հայաստանում սիրիայից տեղափոխված համայնքի շրջանում՝ նպատակ ունենալով ի հայտ բերել համայնքի կանանց շրջանում սեռական և գենդերային բռնության ձևերն ու տարածվածությունը:

Հետազոտությունը, մասնավորապես, նպատակ ուներ:

- ուրվագծել կենսապահովման ներկայիս և նախկին ռազմավարությունները տեղահանված սիրիացի համայնքի շրջանում,
- լույս սփռել Սիրիայից տեղահանված երեխաների դպրոցական հաճախելիության խնդրի վրա,
- նկարագրել Հայաստանում գտնվող այն սիրիացիներին, ովքեր արդեն բռնության զոհ են դարձել և նրանց, ովքեր առավել մեծ ռիսկի տակ են,
- սահմանել համայնքում առկա սեռական և գենդերային բռնությունների պատճառները,
- վերհանել Սիրիայից տեղահանված կանանց նկատմամբ իրականացված սեռական և գենդերային բռնությունների տարածվածությունը,
- որոշել Սիրիայից տեղահանված կանանց ընկալումներն ու վերաբերմունքը սեռական և գենդերային բռնությունների նկատմամբ,
- ապահովել տեղահանված սիրիական համայնքի տարբեր սոցիալ-տնտեսական շերտերի հավասար ներկայացվածությունը հետազոտության մեջ,
- որոշել սեռական և գենդերային բռնությունների դեպքերին անհրաժեշտ արձագանքի մակարդակը և բռնությունների ենթարկվածների առաջ ծառայած մարտահրավերները

## 1.2 Մեթոդաբանություն

Վերոնշյալ խնդիրներն ուսումնասիրելու նպատակով օգտագործվել են որակական և քանակական մեթոդոլոգիաներ, հետազոտությունը ներառել է դեմառդեմ հարցազրույցներ և ֆոկլոր խմբային քննարկումներ: Քանակական տվյալների հավաքման նպատակով մշակվել է ստանդարտացված հարցաթերթ՝ հիմնված հետազոտության հիմնական հարցերի վրա: Հարցաթերթը մշակվել է այնպես, որ հարցազրույցվարի համար լինի հեշտ օգտագործելի, միևնույն ժամանակ հնարավորություն է ընձեռի բավական մանրամասն տվյալներ հավաքագրել անհատական, ընտանիքների և համայնքների մակարդակով:

Որակական տվյալների ձեռքբերման համար օգտագործվել է Ֆոկլոր խմբային քննարկման տեխնիկան: Հատուկ շեշտդրվել է մոդերատորների հարցազրույցի վարման հմտությունների վրա,

<sup>2</sup> ՄԱԿ ՓԳՀ, Syria Regional Refugee Response, <https://data.unhcr.org/syrianrefugees/regional.php> [27 հունվար, 2014թ.]

<sup>3</sup> G.E., The Economist, “Home away from home?”, <http://www.economist.com/blogs/easternapproaches/2013/12/syrian-armenians-armenia> [27 հունվար, 2014թ.]

<sup>4</sup> “National Situation Analysis Report: Women’s Human Rights and Gender Equality” [http://www.enpi-info.eu/mainmed.php?id\\_type=9&id=428](http://www.enpi-info.eu/mainmed.php?id_type=9&id=428) [27 հունվար, 2014թ.]

որպեսզի ֆոկուս խմբային քննարկման մասնակիցները հնարավորինս ներգրավվեն բաց և ազատ քննարկման մեջ: Շատ կարևոր էր ստանալ անկեղծ պատասխաններ զգայուն հարցերի շուրջ և հետագայում դրանք համադրելու համար հետազոտության այլ տվյալների հետ՝ եզրակացությունները հաստատելու համար:

Հարցում ու ֆոկուս խմբային քննարկումներ անցկացնելու համար ընտրվել են համապատասխան փորձառություն ունեցող հինգ հարցազրուցավարներ: Ուսումնասիրող թիմը վերապատրաստվել է ծրագրի դաշտային աշխատանքների համակարգողի կողմից և հետևել է խիստ ընթացակարգի՝ հաշվի առնելու հետազոտվող խմբի առանձնահատկությունները և տվյալների գաղտնիությունը:

### 1.3 Որակի վերահսկողություն

Որակի վերահսկողության ապահովման համար կիրառվել են հետևյալ քայլերը.

- բոլոր հետազոտական գործիքները փորձարկվել են մինչև հիմնական հետազոտության ընթացքում լայնամասշտաբ կիրառումը,
- տվյալների հավաքման փուլին (դաշտային աշխատանքներին) մասնակցել են միայն իգական սեռի որակավորված մասնագետներ, որոնք նախապես անցել են գենդերային բռնության և սույն հետազոտության հետ կապված էթիկական խնդիրների մասով իրազեկման դասընթաց: Ավելին, որակավորված հարցազրուցավարներին տրամադրվել են ՄԱԿ ՓԳՀ-ի գործընկերներ կառույցների մասին տեղեկատվական թերթիկներ, այն դեպքերում երբ հարցվողները կամ նրանց ընտանիքի անդամները կունենան կոնկրետ աջակցության կարիք:
- հարցազրուցավարները հրահանգավորվել են նաև սեռական բռնությունից տուժած անձանց պարագայում, տրամադրել տեղեկատվություն ՄԱԿՓԳՀ-ի հայաստանյան գրասենյակի մասին հետագա աջակցության համար,
- քանակական հարցման հարցաթերթերը պատահականորեն ընտրվել են կրկնակի ստուգման համար, և վերջիններիս ճշգրտությունը ստուգվել է հեռախոսազանգերի միջոցով

### 1.4 Սահմանափակումներ

- Լեզվական խոչընդոտներ (արևելյան և արևմտյան հայերենների առկա տարբերությունները)
- Հետազոտվող խնդրի բարդությունը
- Ցուցակագրված մարդկանց ներկայությունը Հայաստանում

### 1.5 Քանակական հարցում

Թիրախ խումբ ..... Սիրիահայ կին փախստականները

Ընտրանք ..... Ընտրանքը ներառել է 18 տարեկան և բարձր 200 կին հարցվողներ, որոնք ընտրվել են պարզ պատահական ընտրանքով, պատահական թվերի գեներատորի միջոցով, Սիրիայից տեղահանված ընտանիքների ցուցակից առանձնացված 601 կանանց անվանացանկից: Ցուցակը տրամադրվել է ՄԱԿՓԳՀ-ի կողմից: Հարցվողի բացակայության կամ հարցմանը մասնակցել չցանկանալու կամ կոնտակտային տվյալի ոչ ճշգրիտ կամ հին լինելու

դեպքում կիրառվել է պատահական ընտրություն:  
(Տես աղյուսակ 1)

Հարցազրույց տվողների քանակը ..... 200

Հարցազրույցից հրաժարվողների  
(տարբեր պատճառներով) քանակը ..... 153

Հարցազրույցների վայրը..... Դարբնիկի և Նոր Նորքի հանրակացարաններ,  
Անհատական բնակարաններ Երևանում և  
Արագածոտնի մարզում

Մեկ հարցազրույցի տևողությունը ..... Մինչև 1 ժամ

Հարցազրույցների ժամանակը..... 2013թ. նոյեմբեր

Աղյուսակ 1: Ընտրանք

| Թիրախային տարածքներ                      | Հարցազրույցների նախատեսված թիվը (#) | % բաշխում  | Իրականացված հարցազրույցների թիվը (#) | N/A | Հրաժարվել են |
|--|-------------------------------------|------------|--------------------------------------|-----|--------------|
| 1. Կենտրոն                               | 82                                  | 41         | 82                                   | 15  | 28           |
| 2. Աջափնյակ                              | 13                                  | 6.5        | 13                                   | 0   | 0            |
| 3. Արաբկիր                               | 36                                  | 18         | 36                                   | 7   | 6            |
| 4. Շենգավիթ                              | 13                                  | 6.5        | 13                                   | 5   | 5            |
| 5. Դավթաշեն                              | 3                                   | 1.5        | 3                                    | 1   | 0            |
| 6. Էրեբունի                              | 16                                  | 8          | 16                                   | 5   | 3            |
| 7. Քանաքեռ-Զեյթուն                       | 11                                  | 5.5        | 11                                   | 4   | 8            |
| 8. Նոր Նորք                              | 8                                   | 4          | 8                                    | 4   | 1            |
| 9. Նորքի երկրորդ զանգված Սոցիալական փուն | 2                                   | 1          | 2                                    | 0   | 0            |
| 10. Մալաթիա                              | 11                                  | 5.5        | 11                                   | 4   | 1            |
| 11. Դարբնիկ                              | 3                                   | 1.5        | 3                                    | 0   | 0            |
| 12. Արարատ                               | 2                                   | 1          | 2                                    | 0   | 0            |
| <b>Ընդամենը</b>                          | <b>200</b>                          | <b>100</b> | <b>200</b>                           |     |              |

## 1.6 Որակական հարցում

Թիրախ խումբ ..... Սիրիահայ կին փախստականները

Ընտրանք ..... Ընդհանուր առմամբ անցկացվել են չորս ֆոկլուս խմբային քննարկումներ Սիրիայից գաղթած ընտանիքների աղջիկների/կանանց հետ:  
Քննարկումներից երկուսն անցկացվել են հարցազրույցներին արդեն մասնակցածների շրջանում՝ նպատակ ունենալով ավելի խորությամբ հասկանալ սեռական և գենդերային

բռնությունների պատճառներն ու հետևանքները:  
Մյուս երկու խմբերի մասնակիցներն ընտրվել էին  
հարցազրույցներին չմասնակցած  
կանանց/աղջիկների ցուցակից, որպեսզի  
որակական հարցումից ստացված տվյալներն  
ավելի հաստատվեին, հարստացվեին և  
հստակեցվեին:

Հարցազրույց տվողների քանակը ..... Յուրաքանչյուր խմբում 12 հոգի, ընդամենը՝ 4  
խումբ

Հարցազրույցների վայրը ..... ՄՋՄԿ գրասենյակ

Մեկ հարցազրույցի տևողությունը ..... Մինչև 1,5 ժամ

## 2 Եզրակացություններ

### 2.1 Քանակական հետազոտություն

#### 2.1.1 Ընդհանուր տեղեկություններ ընդհանրքների մասին

Համաձայն հարցազրույցների վիճակագրական վերլուծության՝ հարցված կանանց մեծամասնությունը ամուսնացած է (68%), 19%-ը ամուսնացած չէ, այրի է հարցվածների 10 տոկոսը և ամուսնալուծված կամ առանձին է ապրում 3%-ը: Կին հարցվողների միջին տարիքը կազմում է 41.9:

Կրթական առումով իրավիճակը հետևյալն է: Հարցված կանանց ավելի քան 80 տոկոսն ունի կամ բարձրագույն, կամ միջնակարգ կրթություն (բարձրագույն կրթություն ունի հարցված կանանց 37%-ը, իսկ միջնակարգ (ներառյալ ավագ դպրոցը) դպրոցն ավարտել են 47.5%-ը):

Ըստ հարցման տվյալների, հարցված կանանց 19 տոկոսը հանդիսանում է ընտանիքի գլխավորը, և ևս երեք տոկոսը նշել են, որ գլխավորում են ընտանիքը ամուսնուն հավասար:

Հաշմանդամություն ունի հարցմանը մասնակցած կանանցից երեքը (1.5%), որոնցից մեկը ներկայում ստանում է նպաստ:

Ինչ վերաբերում է ընտանեկան կազմին, ընտանիքների 60 տոկոսում կան երեխաներ (109 տղա, 108 աղջիկ): Մեկ ընտանիքը ունի միջինում 1.9 երեխա: Իրենց ընտանիքի անդամներից առանձին բնակվող երեխաներ հարցմանը մասնակից կանանց ընտանիքներում չկան: Ընտանիքների անդամների միջին թիվն է 4.2:

#### 2.1.2 Բնակության վայրը

Հարցվածների 99%-ը Սիրիայում բնակվել է քաղաքում (որոնցից 5.5%-ը՝ մայրաքաղաքում): Ներկայումս Հայաստանում նույնպես քաղաքային միջավայրում է բնակվում հարցմանը մասնակից կանանց ընտանիքների 99%-ը:

Կացարանները, որտեղ բնակվում են վերաբնակեցված ընտանիքները, բաղկացած են միջինում 2.5 սենյակից, որտեղ ապրում են հինգ հոգի: Այսպիսով, մեկ սենյակում միջին հաշվով

ապրում են երկու հոգի: Ընտանիքների 35.5%-ը բնակվում է այլ ընտանիքի հետ համատեղ նույն կացարանում:

**2.1.3 Սիրիայից ներգաղթելու ուղին**


Ընտանիքների անդամների 90%-ը տեղափոխվել է Հայաստան, մնացածը դեռ Սիրիայում են կամ այլ վայրերում: Ընտանիքները հիմնական հատվածը Հայաստան է եկել 2012-ին (65.5), ամեն երրորդ ընտանիք 2013-ի ընթացքում իսկ 2011-ին տեղափոխվել է միայն երկու տոկոսը:

Ըստ հարցման տվյալների ընտանիքների մեծամասնությունը (65.5%) Հայաստան է ժամանել անմիջապես Սիրիայից: Ընտանիքների 28.5%-ը Հայաստան են եկել Թուրքիայով և Վրաստանով: Նրանցից 33 ընտանիք օգտվել է ավտոբուսից, իսկ 25-ը՝ ավտոմեքենայից: Հարցվածների մնացած վեց տոկոսը Հայաստան են եկել Միացյալ Արաբական Էմիրություններից կամ Լիբանանից՝ ինքնաթիռով:

**2.1.4 Զբաղվածությունը**

Պարտադրված տեղահանումը կարող է քայքայել ընտանիքների կենսամակարդակը: Դրա ազդեցությունը կարող է ոչ միայն կենսամիջոցների կորստի պատճառ դառնալ այլև կարող է, ավելի մեծ չափով, հանգեցնել ընտանիքների խոցելիության կտրուկ աճի: Հարցվողների զբաղվածության վերաբերյալ եզրակացությունները ցույց տվեցին, որ հարցվող կանանց 83 տոկոսը գործազուրկ է Հայաստանում, ի տարբերություն Սիրիայում եղած 64 տոկոսի, ինչը 19 տոկոս աճ է ցուցանում: Մինչ Սիրիայի հակամարտությունը հարցվողների 97 տոկոսը ընտանիքում առնվազն մեկ աշխատող ուներ:

Գծապատկեր 1: Հարցմանը մասնակից կանանց զբաղվածությունը Սիրիայում և Հայաստանում




Ինչպես ներկայացված է գծապատկեր 1-ում, հարցմանը մասնակից կանանց ընտանիքների անդամներից յուրաքանչյուր չորրորդը (25%) նախքան հակամարտությունը ներգրավված է եղել առևտրում, իսկ մշակող արդյունաբերությունում զբաղված է եղել ընտանիքների անդամների 18%-ը: Հաջորդ ամենատարածված զբաղվածության ոլորտը սպասարկման ոլորտն է (13%), արհեստագործության մեջ ընդգրկված է ամեն տասներորդը (11%), որին հաջորդում է կոմունալ



ծառայությունների ոլորտը՝ 6% ցուցանիշով: 15-17 տարեկան տարիքային խմբում զբաղվածություն ունեցել է մեկ տղամարդ:

Մեկ զբաղված անձի հաշվով միջին ամսական եկամուտը, օրինակ՝ մշակող արդյունաբերությունում կամ առևտրում, տատանվում է 300000-ից 370000-ի շրջանակներում: Իսկ ընտանիքում մեկ անձին բաժին ընկնող միջին ամսական եկամուտը կազմել է 67000 դրամին համարժեք գումար<sup>5</sup>:


Գծապատկեր 2. Հարցմանը մասնակից կանանց ընտանիքների աշխատանքային տարիքի անդամների զբաղվածությունն ըստ ոլորտների (Սիրիա)



Ի տարբերություն մինչև հակամարտության շրջանի 97% զբաղվածության ցուցանիշի, տեղահանված ընտանիքների ընդամենը 50%-ում է անդամներից նվազագույնը մեկ հոգի ապահովված աշխատանքով Հայաստանում: Հարցմանը մասնակից կանանց ընտանիքների անդամները Հայաստանում ներգրավված են հետևյալ ոլորտներում.

<sup>5</sup> Եկամտի չափը համաձայնել են ներկայացնել 200-ից 147-ը:

Գծապատկեր 3. Հարցմանը մասնակից կանանց ընտանիքների աշխատանքային տարիքի անդամների զբաղվածությունը ըստ ոլորտների (Հայաստան)



Հարցմանը մասնակից կանանց ընտանիքների անդամների զբաղվածության ամենատարածված առաջին երեք ոլորտներում հակամարտությունից հետո տեղի է ունեցել որոշակի փոփոխություն: Հարցմանը նախորդող ամսվա ընթացքում սպասարկման ոլորտում Հայաստանում զբաղված է եղել սիրիահայերի 29%-ը: Ընտանիքի անդամներից յուրաքանչյուր հինգերորդը (20%) զբաղված է առևտրով, հաջորդ ամենատարածված զբաղվածության ոլորտը մշակող արդյունաբերությունն է, որով զբաղված են ընտանիքների անդամների 16%-ը: Դրան հաջորդում է արհեստագործությունը՝ 12% ցուցանիշով: 15-17 տարեկան տարիքային խմբում Հայաստանում զբաղվածություն ունեն երկու տղամարդ (1%):

Մեկ զբաղված անձի հաշվով միջին ամսական եկամուտը մշակող արդյունաբերությունում մոտ երեք անգամ ավելի ցածր է և կազմում է միայն ամսական 100000 դրամ:

Իսկ Հայաստանում անցյալ ամիս ընտանիքում մեկ անձին բաժին ընկնող միջին ամսական եկամուտը երկու անգամ ավելի ցածր է քան Սիրիայում և կազմել է 33000 ՀՀ դրամ համարժեք գումար<sup>6</sup>:

### 2.1.5 Ծախսերը


Ինչ վերաբերում է ամսական ծախսերին, ընտանիքների 66.3%-ը անցյալ ամիս շարունակել է ծախսել մինչև հակամարտությունը Սիրիայում կուտակած դրամական միջոցները: Ամեն չորրորդ ընտանիքը (26.1%) օգնություն է ստացել հասարակական կազմակերպություններից, ամեն հինգերորդ ընտանիքը (19.1%) ստացել է դրամական օժանդակություն Հայաստանում բնակվող

<sup>6</sup> Եկամտի չափը համաձայնել են ներկայացնել 200-ից 64-ը:

բարեկամներից, 17.6%-ը դրամական փոխանցումներ է ստացել արտերկրից, 6%-ին օգնել է ՀՀ կառավարությունը:

Սիրիահայ ընտանիքի միջին ամսական ծախսը Հայաստանում կազմում է 252000 ՀՀ դրամ, իսկ մեկ անձի հաշվով միջին ամսական ծախսը՝ 75259 ՀՀ դրամ:

Գծապատկեր 4. Ընտանիքների ամսական ծախսային հոդվածների համամասնությունը



2.1.6 Ծառայությունների հասանելիությունը


Հարցմանը մասնակից կանայք համեմատաբար ավելի տեղեկացված են անվճար առողջապահական ծառայությունների (62.5%), սննդի (69.5%) և ոչ սննդային պարագաների (61%) բաշխման ծառայությունների մասին:

Կանանց շրջանում տեղեկացվածությունը այնպիսի ծառայությունների վերաբերյալ, ինչպիսիք են կանանց կամ երեխաների կենտրոնները, անվտանգության կամ իրավական, ինչպես նաև հոգեկան առողջության և սոցիալ-հոգեբանական աջակցության կենտրոնները, 12%-ից ավելի չի կազմում:


Առողջապահական ծառայություններից օգտվել են հարցվածների 55%-ը, սնունդ ստացել՝ 68%-ը, ոչ սննդային պարագաներ՝ 55%-ը: Երեխաների կենտրոնների ծառայություններից օգտվել են 5.5%-ը: Անվտանգության հետ կապված հարցերով խորհրդատվություն, ինչպես նաև հոգեկան առողջություն և սոցիալ-հոգեբանական աջակցություն (ՀԱՍՀԱ) են ստացել ոչ ավելի, քան 2%-ը:

Հարցումների ընթացքում հարցազրուցավարները պարզել են, որ առողջապահական ծառայությունների կարիք ունեցել են, բայց տարբեր պատճառներով դրանցից չեն օգտվել կանանց 12%-ը (ծառայությունների ցածր որակ 3%, հրաժարվել են սպասարկել 3% և այլն), սննդի բաշխման ծառայություններից՝ 6%-ը (3%-ին հրաժարվել են տրամադրել, 1%-ի դեպքում անվայել վարք են դրսևորել և այլ պատճառներ), ոչ սննդային պարագաներից չեն կարողացել օգտվել 11%-ը (4.5%-ին հրաժարվել են տրամադրել, 2%-ը գրանցվել է բայց դեռ չի ստացել և այլ նմանատիպ պատճառներ):

Գծապատկեր 5. Հայաստանում առկա ծառայությունների հասանելիություն



Գծապատկեր 6. Սիրիահայ կանանց ընդհանուր գնահատականները Հայաստանում իրենց կացության տարբեր կողմերին



Կրթական ծառայությունների առումով՝ դպրոց է հաճախում դպրոցահասակ տղա երեխաների 86.4%-ը, իսկ աղջիկների՝ 95.8%-ը: Դպրոց չհաճախելը ծնողները պայմանավորում են փաստաթղթային խնդիրներով, գումարի բացակայությամբ, երեխայի կողմից ցանկության բացակայությամբ կամ երկրից արտագաղթելու մտադրությամբ:

Հարցման ընթացքում հնչել են նաև մի շարք գնահատողական ձևակերպումներ հայաստանյան հասարակական կյանքի տարբեր կողմերի վերաբերյալ, և հարցմանը մասնակից կանանց առաջարկվել է դրանք հաստատել կամ հերքել: Այսպիսով, կանանց 76.5%-ը համաձայն չէ<sup>7</sup> այն պնդման հետ, որ սիրիահայ փախստականին Հայաստանում քաղաքացիություն դժվար է ստանալ:

Ինչպես ներկայացված է գծապատկեր 6-ում, կանանց 61%-ը հերքում է այն պնդումը, ըստ որի իրենք աշխատանք չեն գտնում իրենց փախստական լինելու պատճառով իսկ 28%-ը՝ հաստատում:

Յուրաքանչյուր երկրորդ կին (55.6%) փաստել է, որ իր երեխան կողմնակալ վերաբերմունքի է արժանանում համադասարանցիների և ուսուցիչների կողմից փախստական լինելու պատճառով: 28%-ն այս հարցում հստակ դիրքորոշում չունի, և միայն 15.7%-ը համաձայն չէ նման պնդման հետ: Միևնույն ժամանակ կանանց մեծամասնությունը (72.5%) հերքում է այն պնդումը, ըստ որի հայկական հասարակությունը բացասական վերաբերմունք ունի կին փախստականների և ապաստան հայցողների նկատմամբ, և միայն ամեն հինգերորդն է (20.5%) համաձայնել նման ձևակերպման հետ:

Կանանց մեծամասնությունը (71.5%) իրեն չի համարում մերժված և օտարված հայաստանյան հասարակությունում միևնույն ժամանակ ամեն չորրորդ կին (26%) իրեն զգում է օտարված: Ընդհանրապես կին փախստականները և ապաստան հայցողները իրենց ևս մեկուսացված չեն զգում հայկական հասարակությունում կարծում է կանանց 64%-ը իսկ 25%-ը հենց այդպես էլ համարում է:

Ամեն երկրորդ կին (55.5%) կարծում է, որ իրենց համայնքի ղեկավարը բավարար ջանքեր չի ներդնում փախստականների և ապաստան հայցողների խնդիրները լուծելու ուղղությամբ, ամեն չորրորդ այս հարցում հստակ մոտեցում չունի և ամեն հինգերորդը (20.5%) համաձայն չէ այս պնդման հետ: Ըստ կանանց 58.5%-ի Հայաստանի իշխանությունները բավարար ջանքեր չեն ներդնում փախստականների և ապաստան հայցողների խնդիրները լուծելու ուղղությամբ կարծում իսկ 17%-ը այս կարծիքին չէ:

Կանայք տարակարծիք են և միանշանակ մոտեցում չունեն այն հարցին թե արդյոք Հայաստանի իշխանությունները պաշտպանում են փախստականների և ապաստան հայցողների շահերը: Այսպիսով վերը նշված հարցին չի կարողացել պատասխանել 40.5%-ը, 34%-ը համաձայնել է, իսկ 25.5%-ը չի համաձայնել: Նմանատիպ իրավիճակ է նաև միջազգային կազմակերպությունների աշխատանքի հարցում: Այսպիսով 42%-ը համարում է, որ միջազգային կազմակերպությունները բավարար ջանքեր չեն ներդնում փախստականների և ապաստան հայցողների խնդիրները լուծելու ուղղությամբ, 26%-ը դժվարացել է պատասխանել իսկ 31.5%-ը այդ կարծիքին չէ:

### 2.1.7 Սեռական բռնություն

ՄԱԿՓԳՀ-ի «Փախստականների, հայրենադարձների և ներքին տեղահանված անձանց նկատմամբ սեռական և գենդերային բռնության» կանխման և արձագանքման ուղեցույցը սեռական և գենդերային բռնությունը դասակարգում են ըստ հետևյալ հինգ խմբերի՝ սեռական


<sup>7</sup> Պատասխաններում նշված «համաձայն չեմ» և «բացարձակապես համաձայն չեմ» ձևակերպումները տեքստում ներկայացվել են ընդհանրացված տեսքով:

բռնություն, ֆիզիկական բռնություն, սոցիալ-տնտեսական բռնություն, էմոցիոնալ և հոգեբանական բռնություն և վնասակար ավանդույթային սովորություններ:<sup>8</sup>

**Մինչ-տեղահանում ան ժամանակաշրջան**

Սիրիայի տարածքում կանանց 15%-ը ենթարկվել է բռնությունների առնվազն մեկ անգամ: Դեպքերի ճնշող մեծամասնությունում բռնություն գործադրողը Սիրիայի ապստամբ բանակի ներկայացուցիչներն են (74%՝ 25 դեպք), 12% դեպքերում բռնություն գործադրողները անհայտ անձիք են, իսկ մնացած դեպքերը տիպային չեն և չեն գերազանցում մեկ կամ երկու դեպքը կանանց հետ պատահած ընդհանուրը 34 դեպքերի մեջ:

Գծապատկեր 7. Բռնի գործողությունների տարածվածությունը Սիրիայի տարածքում



Ինչպես պատկերված է գծապատկեր 7-ում, զենքով ահաբեկման դեպքերը կազմում են 11% (21 դեպք), կրակոցներ կամ դանակահարություն վերապրել են 4%-ը (8 դեպք), զրկվել են սննդից և ջրից 3.5%-ը (5 դեպք): Կանանց երկու տոկոսը իրենց հասցեին անվայել սեռական բնույթի դիտողություններ են լսել, ևս երկու տոկոսը հարկադրված են եղել դիտել այլ անձանց նկատմամբ կիրառվող ֆիզիկական բռնությունը (4 դեպք): Սիրիայի տարածքում ըստ հարցման տվյալների որևէ մեկի նկատմամբ սեռական բռնություն չի կիրառվել, բացառությամբ մեկ դեպքի, երբ կնոջ մարմնում ինչ-որ բան են փնտրել:

<sup>8</sup> “Sexual and Gender-Based violence against Refugees, Returnees and Internally displaced Persons- UNHCR Guidelines for Prevention and Response” <http://www.unhcr.org/3f696bcc4.pdf> [27 հունվար, 2014թ.]

## Տեղահանման ժամանակաշրջան

Հայաստանի տարածքում որևէ տեսակի բնության մեկ կամ մեկից ավելի անգամ ենթարկվել են հարցվածների 3%-ը: Գրանցվել են սեռական բնույթի դիտողության երեք և մի քանի այլ դեպքեր կապված ֆիզիկական վնաս պատճառելու կամ սեռական օրգանները շոշափելու հետ: Սիրիայից Հայաստան տեղափոխվելու ընթացքում այլ երկրների տարածքում գրանցվել է բնության երեք դեպք:

30 կին նշել է վախերի, հոգեբանական բարդությունների մասին, որոնք վերապրած բռնարարքների արդյունք են: Եվս երեք կին նշել են նաև ֆիզիոլոգիական բարդությունների մասին: Նշված կանանց 70%-ը (23 դեպք) միջադեպի մասին կիսվել է այլ մարդկանց հետ, իսկ մնացածը կարիք չեն զգացել կիսվելու կամ ցանկացել են մոռանալ: Բժշկական օգնության դիմել է միայն երեք կին, 19-ը խնդիրը էական չեն համարել, 4-ը չեն իմացել՝ ուր դիմել, իսկ մնացածն ուղղակի չեն ցանկացել, վախեցել են տնից դուրս գալ կամ ֆինանսական խնդիրներ են ունեցել:

### 2.1.8 Ընտանեկան բնություն

«Ընտանեկան բնությունը կարող է լինել ցանկացած բնություն ներկա կամ նախկին ինտիմ հարաբերություններ ունեցող զուգընկերների միջև, երբ և որտեղ բնություն տեղի ունենա, ինչպես նաև ընտանիքի անդամների միջև (օրինակ՝ սկսեսուրների և հարսների): Ընտանեկան բնությունը կարող է ներառել սեռական, ֆիզիկական, հոգեբանական կամ ֆինանսական չարաշահում:»


*«Փախստականների, հայրենադարձների և ներքին տեղահանված անձանց նկատմամբ սեռական և գենդերային բնություն», ՄԱԿՓԳՀ, մայիս 2013թ., Կանխման և արձագանքման ուղեցույց*

Ներկա ամուսնու կողմից բնության դեպքերի առկայության մասին վկայել են հինգ կին (2.5%), որոնցից մեկը նշել է համարյա բոլոր տեսակի հնարավոր բնությունների մասին: Այս դեպքում կինը դիմել է ծնողների օգնությանը, իսկ բնության պատճառը համարում է խանդը: Մնացած չորս դեպքերը վերաբերել են համայնքային կյանքին մասնակցելու արգելքին, տնային կալանքին կամ գումար չտրամադրելուն, ինչը կանանց կողմից լուրջ խնդիր չի համարվել:

Փորձ է արվել ընտանեկան բնության տարբեր դրսևորումների վերաբերյալ կանանց մոտեցումը ճշտել մի շարք գնահատողական ձևակերպումների միջոցով, որոնք կանայք պետք է հերքեին կամ հաստատեին:

Այսպիսով, հարցված կանայք միանշանակ համաձայն չեն այն պնդումների հետ, ըստ որի տան աշխատանքները ամուսնու պահանջներին ոչ համապատասխան կատարելն արդարացնում է կնոջը հարվածելը (100%), ամուսնուն չենթարկվելն արդարացնում է կնոջը հարվածելը (97.4%), սեռական հարաբերությունները մերժելն արդարացնում է կնոջը հարվածելը (93.8%), ամուսնուն սիրուհու մասին հարցնելն արդարացնում է կնոջը հարվածելը (86.8%):

Գծապատկեր 8. Միրիափայ կանանց ընդհանուր մտրեցումները ընտանեկան բռնության դրսևորումներին



Կանանց մեծամասնությունը համաձայն է, որ կինը կարող է հրաժարվել ամուսնու հետ սեռական հարաբերությունից, եթե կինը ցանկություն չունի (74.2%) կամ վատ է զգում (90.3), եթե ամուսինը հարբած է (78.6%) կամ վատ է վերաբերվում կնոջը (88.8%):

Ընդհանուր առմամբ կանանց մեծամասնությունը (69.7%) կարծում է նաև, որ ընտանեկան բռնության խնդիրներն ավելի լավ են կարգավորվում նեղ անձնական շրջանակում, քան ոստիկանության կողմից: 10%-ը նման կարծիքի չէ, իսկ 20%-ը հստակ դիրքորոշում չունի:

Հստակ մոտեցում չկա նաև հետևյալ առաջ քաշված դրույթների շուրջ: Կանանց 64.9%-ը չգիտի, թե արդյո՞ք դատական համակարգը բավարար ջանքեր գործադրում է բռնության ենթարկված կանանց պաշտպանության համար: Յուրաքանչյուր երկրորդ կնոջ համար (53.1%) պարզ չէ՝ արդյո՞ք կանանց հանդեպ բռնության խնդիրը դեռևս արդիական է Հայաստանում, թե ոչ: Միևնույն ժամանակ ամեն երրորդ կին կարծում է, որ արդիական է (32.5%), քանի որ



հասարակությունն անտարբեր է բռնության զոհերի հանդեպ: Ամեն երկրորդ կնոջ համար (52.6%) պարզ չէ նաև՝ արդյո՞ք հայ հասարակությունն ավելի հակված է մեղադրելու սեռական բռնության զոհին, քան բռնություն գործադրողներին, իսկ այս դրույթը հաստատողները և հերքողները համարյա նույն թիվն են կազմում (համապատասխանաբար 24.3% և 23.2%):

Հայաստանում ընտանեկան բռնության խնդրի տարածված լինելու մասին հաստատում են հարցվածների 41.3%-ը, հերքում՝ 11.3%-ը, սակայն ավելի շատ թվով մարդ այս հարցի պատասխանը չունի (47.4%):

## 2.2 Որակական հարցում

### 2.2.1 Կրթություն

Նախադպրոցական կրթության պարագայում սիրիահայ ընտանիքների առաջ ծառայած հիմնական խնդիրը բյուրոկրատական քաշքշուկներն են կամ, այլ կերպ ասած, երեխային մանկապարտեզ ընդունելը: Այս հարցում սիրիահայ ընտանիքներն ունեն փոփոխական հաջողություններ: Ֆոկուս խմբային քննարկումներում նկարագրված դեպքերի մի մասում առանց որևէ խնդրի երեխաներն ընդունվել են մանկապարտեզներ, իսկ մյուս մասում ծնողները ստիպված են եղել սպասել անհայտ ժամանակով, քանի որ մանկապարտեզի տնօրենները մերժումները պատճառաբանել են տեղերի բացակայությամբ կամ երեխայի տարիքով:

**Մեջբերում ֆոկուս խմբից**

— Ես էլ աղջիկ ու տղա ունեմ մանկապարտեզի տարիքի, բայց չընդունեցին, ասացին, որ տեղ չկա: Թաղայինին էլ ենք դիմել, ասեց տեղ չկա, պետք ա սպասեմ, մինչև որ տեղ լինի, մի տարի, երկու տարի: Բայց քանի տարի ա, որ ասում են՝ տեղ չկա: Անցած տարվանից դիմում ենք:

— Ես էլի էսպիսի դեպք լսել եմ, որ էլի մանկապարտեզ չեն ընդունել, նա էլ երեխան երեք տարեկան էր: Պատճառը չգիտեմ, միայն ասեց, որ երեխային մանկապարտեզ չեն ուղարկում, քանի որ չեն ընդունել:

Կան նաև դեպքեր, երբ թաղապետարանի օգնությամբ ընտանիքները կարողացել են լուծել մանկապարտեզում երեխայի գրանցման հարցը և ներկայումս երեխաները նորմալ հաճախում են մանկապարտեզ:

Նախադպրոցական տարիքի երեխաների հետ կապված այլ խնդիրներ ծնողների կողմից չեն առանձնացվել:

**Մեջբերում ֆոկուս խմբից**

— Ես ի սկզբանե, որ տանելու էի դպրոց, ինձ էտ մի հարցն էր մտաբանում, որ չլինի հանկարծ ծաղրեն, բայց , կարծես թե, երեխաներս, շփվելով թե հայաստանցի, թե սիրիացի երեխաների հետ, նորմալ է:

— Հա էտ խնդիրը մենք էլ ունինք, մեզնեն ոչ մեկ հայրերեն չիտե, երեխաս էլ չի հասցնե դպրոցը, ուսուցչուհի ենք վարձել, որ հետը հայերեն պարապի առանձին, բայց նա էլ 20.000 դրամ կուզե գոնե

*օրվա դասերը պարապելու համար, անցյալ տարի 5500 ենք վճարել, քանի որ առաջին դասարան էր, այս տարի, որ երկրորդ դասարան է 20.000 դրամ կուզե ու չի իջնում, ու շարք դժվար է այսպես, հազիվ տան վարձն ենք հասցնում, ինչպե՞ս համ էլ այս 20.000 դրամը վճարենք:*

Միջնակարգ կրթության պարագայում, դատելով ֆոկուս խմբային քննարկումներից, խնդիրները շատ ավելի բազմաբովանդակ են: Ընդհանուր առմամբ տնօրենները երեխաներին ընդունում են դպրոցներ առանց որևէ խնդիրներ հարուցելու:

Հասակակից երեխաների պարագայում նույնպես առանձնակի խնդիրներ չկան և, բացառությամբ մեկ-երկու նկարագրված դեպքի, սիրիահայ երեխաներն իրենց դպրոցներում գտնվում են ընկերական միջավայրում:

Դպրոցում խնդիրներ են ծագում արևելահայերեն լեզվի հետ կապված և շատ դեպքերում ծնողները ստիպված են հավելյալ գումարներ տրամադրել ուսուցիչներին հայոց լեզվի պարապմունքներ կազմակերպելու համար:

Լեզվական խնդրից զատ ընդհանուր առմամբ բոլոր ֆոկուս խմբերում քննարկվել է կրթության որակի հարցը, ինչպես նաև ուսուցիչների վերաբերմունքի հարցը սիրիահայ երեխաների նկատմամբ: Որոշ ծնողների կարծիքով տեղի դպրոցներում, ի տարբերություն սիրիական դպրոցների, խիստ չեն վերաբերվում երեխայի առաջադիմությանը:

### **Մեջբերում ֆոկուս խմբից**

*— Ես մի աղջիկ ունեմ, որ 7-րդ դասարանում պետքա սովորեր, բայց չկարողացավ ոչ մի բան հասկանալ, չկարողացավ հայերեն գրերը հասկանալ, գրքերը առանք տուն եկանք , բայց ոչ մի բան չհասկացավ, մի շաբաթ գնաց օրինակի համար չկարողացավ շարունակել: Բայց հարաբերությունները երեխաների հետ լավ էր:*

*— Դասապրոնները չեն տա ջերմություն, մեծ տարիքով դասապրոնները հավես չունին, մենք մեր օրիորդներուն չէինք հավնիր, փառք են մեր օրիորդները, որ այդքան խիստ էին ու այդքան լավ կդասավանդեին երեխաներուն, այդ համեստ խոսակցությունը հոս չկա, կոշտ կոպիտ են: Դրա համար երեխան չի գնում դպրոց:*

*Նարդոսի դպրոցում մի բաժանմունք սիրիահայերու համար հատկացուցել էին, արդեն մի շաբաթ գնալեն հետո լուր ստացանք, որ սիրիահայերը թող չգան, մենք փակել ենք: Վերջը երեք շաբաթ հետո խաբար էրան, որ հայերեն լեզվով պիտի գան:*

Ֆոկուս խմբային քննարկումների մասնակից կանայք առանձնակի կարևորում են դպրոցի ուսուցիչների վերաբերմունքը երեխաներին սահուն դասապրոցես ինտեգրելու հարցում: Կան ուսուցիչներ, որոնք սրտացավ վերաբերմունք ունեն, բայց և կան այնպիսիները, որոնք անտարբեր են երեխաների խնդիրների նկատմամբ և սիրիահայ երեխաներին նույն պահանջներն են ներկայացնում, ինչ մնացած երեխաներին: Ներկայացվել է դեպք, երբ մայրը երեխային դպրոցից հանել է, և ներկայումս աղջիկը կրթություն է ստանում տանը:

Ծնողների տեղեկացմամբ՝ տարբեր կազմակերպությունների կողմից սիրիահայերի համար իրականացվում են կրթական ծրագրեր, որոնք տրամադրում են դասընթացներ կամ մասնակիորեն փակում համալսարանական կրթության վճարը:

### 2.2.2 Աշխատանք

Ինչպես փաստում են ֆոկուս խմբային քննարկումները, Հայաստանում աշխատանքի հետ կապված կա երկու հիմնական խնդիր՝ աշխատանք գտնելը ինքնին և ցածր վարձատրությունը: Դատելով քննարկումների թեմաներից՝ սիրիահայերի՝ փախստական լինելու հանգամանքը աշխատանք գտնելու հարցում որևէ բացասական ազդեցություն չի թողնում:

#### **Մեջբերում ֆոկուս խմբից**

— Ու պարոն Դումանյանը ասեց բոլորին, որ ուզում ա օգնի, որ ինչ վայր բան տեսել ենք, ուզում ա էնպես անի, որ դա անցնի, մոռանանք, որ մեզ լավ զգանք էստեղ, ու ասեց, որ ինչ խնդիր էլ լինի ,իրեն դիմենք: Ես օրինակ կես դրոյքով եմ ընդունվել, հեկո իրեն էլի մոտեցա, որ հավաք եղավ, ասեցի, որ շատ շնորհակալ եմ, որ ինձ ընդունել եք աշխատանքի , խոնարհվում եմ Ձեր առաջ, բայց 24000 դրամով ես ո՞նց ընտանիք պահեմ, երկրորդ օրը մեր շեֆին զանգեցին, ասեցին, ու ինքը մի դրոյք սարքեց, ճիշտ ա դա բան չփոխեց, բայց էլի բան ա:

Աշխատանք գտնելու խնդիրը մասամբ լուծվում է պետական կառույցների շնորհիվ: Քննարկմանը մասնակից կանանց նկարագրությամբ իրենց ընտանիքների անդամներից շատերը նախարարությունների կամ թաղապետարանների աջակցությամբ գտել են աշխատանք:

#### **Մեջբերում ֆոկուս խմբից**

— Մեր տանից ոչ մեկը չի աշխատում, հեկոներս բերածով յուրա կերթանք: Աղջիկս կաշխատիր բանջարեղենի խանութում, բայց փակեցին: Ես էլ չգիտեմ՝ ուր դիմեմ գործի համար:

— Մեր ընտանիքում ամուսինս է աշխատում, տաքսիի վրա կաշխատի: Օրական 5500 դրամ վարձ կուտա, մնացածը իրեն, հազիվ կհերիքե, օրական 2000 դրամ հազիվ կաշխատի:

Ես որ հոս եկա ինձ ձրիաբար ուղարկեցին որպեսզի ես հաշվապահության ՀԾ (Հայկական ծրագիր) էնեմ, հենց ՀԾ-ի կենտրոնը ինքը ուղարկեց ինձ դասերի ձրիաբար, ես երեք ամիս սորվեցա:

— Ես էլ աշխատանք փնտրեցի, գտա, խոհանոցային էր, բայց ամուսինս չթողեց, քանի որ գիշերվա ժամի էր, աշխատանքներ կան՝ ժամերը հարմար չեն, ու էտ ժամի փիկինի համար դուրսը աշխատել հարմար չէ, օրինակի համար ցերեկվա ժամին կաշխատենք՝ ամոթ չէ, ու ժամի երթաս երկու հազար դրամի համար, ինչի համար, երբ բոլոր պարագաները թանկ են, անոր համար ամուսինս չձգեց, տունն եմ, իրեն կօգնեմ, եթե բան պետք լինի, տունն եմ, երեխաներու կմեծեցնեմ:

Պետական կամ միջազգային կազմակերպությունները կազմակերպել են վերաորակավորման դասընթացներ ինչպես, օրինակ, տուրիզմի, հաշվապահական հաշվառման կամ համակարգչային իմացության դասընթացները, և քննարկմանը մասնակից կանանցից ոմանք մասնակցել են այդ դասընթացներին: Ֆոկուս խմբում քննարկված մնացած օրինակներում, որոնք կազմում են մեծամասնություն, աշխատանք գտնելու խնդիրը լուծվում ընտանիքների կողմից՝ ինքնուրույն կամ ավելի վաղ տեղափոխված այլ սիրիահայ ընտանիքների աջակցությամբ:

Քննարկված օրինակների մեծ մասում, երբ մարդիկ կարողացել են գտնել աշխատանք, խոսքը գնում էր վարսավիրի, ավտոմեխանիկի, ռեստորաններում աշխատանքի և այլ նմանատիպ աշխատանքների մասին, որտեղ վարձատրությունը կամ եկամուտը ցածր է և չի բավականացնում ընտանիքների առօրյա ծախսերի համար:

Առանձին խնդիր է հանդիսանում աշխատանքային ժամերի չնորմավորված լինելը: Ռեստորանային բիզնեսում, օրինակ, կանանցից պահանջվում է մինչև ուշ երեկո աշխատել, ինչը սիրիահայ տղամարդկանցից շատերի կողմից ընդունելի չէ:

Քննարկումներից պարզ դարձավ, որ ընտանիքներից շատերը ֆինանսական բացը դեռևս լրացնում են Սիրիայից բերված խնայողություններով:

Աշխատավայրում որևէ բացասական կամ խտրական վերաբերմունքի օրինակներ ֆոկուս խմբի մասնակից կանայք չեն մեջբերել և փաստում են, որ իրենց աշխատանքում բոլորը ցանկանում են լինել օգնական՝ իմանալով իրենց կարգավիճակի մասին:

### 2.2.3 Հայաստանում առկա ծառայությունների հասանելիությունը

Ֆոկուս խմբային քննարկումներից պարզ դարձավ, որ ծառայությունների կամ ապրանքների բաշխման գործընթացը չափազանց անկազմակերպ է իրականացվում:

**Մեջբերում ֆոկուս խմբից**

— Ես դեղորայքներից էլ օգտված եմ: «Առաքելություն Հայաստան»... Օրինակ, իմ ամուսինը խնդիրներ ունի, ու մենք ամսական մե դեղմ կառնենք, որը որ 20000 դրամ է հոս, և քանի որ ես բժշկական կենտրոնում կաշխատում, այնտեղից դեղատոմսը կբերեմ, դե որովհետև իրենք փաստ կուզեն, այդ դեղատոմսը ես կուտամ «Առաքելություն Հայաստանին», ու իրենք մեզ բոլոր դեղերը, ինչ մեզ անհրաժեշտ է, տալիս են:

— Անցած տարի մեզ համ էլ «Սիթի» քարտեր բաժանեցին, մի անգամ էլ այս տարի բաժանեցին: Բայց մեր միակ խնդիրը աշխատանքն է, եթե աշխատանք լինի նորմալ, տունին վարձը կարողանանք տալ, մնացած ամեն հարցն էլ լուծվող են: Հիմա եթե մեզ մեր ծանոթներից մեկը չասեր, որ սկեսուրոջս համար պետք է սփյուռքի նախարարություն դիմեինք, մենք ոչ մի ուրիշ տեղե չէինք կարող իմանալ ու ստիպված շատ գումարներ կվճարեինք:

Կազմակերպություններից քչերն են կապվում սիրիահայերի հետ՝ տեղեկացնելու այս կամ այն օգնության մասին, և հաճախ սիրիահայ ընտանիքները պատահականորեն են տեղեկանում տրամադրվող օգնության մասին: Որևէ օգնության առկայության մասին ընտանիքները հիմնականում տեղեկանում են միմյանցից:

Կարիքների գնահատման տարատեսակ հարցումները սիրիահայերի շրջանում առաջացնում են շփոթություն, ինչպես նաև ավելորդ սպասումներ, քանի որ հարցումներից հետո երկար ժամանակ հույսով սպասում են, թե իրենց նշած ապրանքները կամ ծառայությունները երբ պետք է իրենց տրամադրվեն:

Քննարկումների ընթացքում նշվել են մի շարք կազմակերպությունների անուններ, որոնք մարդասիրական օգնություն են ցուցաբերում, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ ընտանիքները բավական տեղեկացված են այն կազմակերպությունների և գերատեսչությունների մասին, որոնք զբաղվում են մարդասիրական օգնության տրամադրմամբ:

### **Մեջբերում ֆոկուս խմբից**

— Մտել եմ Արմենո, որ փոքր փողայիս էլ էնտեղեն կոշիկ առնեմ, 20000 'էր էնտեղի վաուչերի գինը, ամենաէժան սապոգը 32000 դրան էր, ես գրպանես 12000 դրամ էլ պիտի դնեմ, որ սապոգ վերցնեի, է 12000 դրամով ես շուկայեն ալ կրնայի վերցնել, Նորեն այդ պզդկին բան չեղավ, էպ 20000-ի վրա ավելացրել եմ 5000, մեծին կուտրկա եմ առել: Էն մյուս գումարին էլ մտել եմ Ջառա, մե բլուսկամ ինձի վերցուցել եմ, մի հատ էլ բրդից սվիտր փոքր փողայիս համար վերցուցել եմ ու էպ փողը պրծավ: Ընդամենը 4 կտոր բան եմ առել 100.000 դրամի, բայց էպ 100000 դրամին ես շուկայեն ամեն ինչ կրնայի առնել երեքիս համար էլ, բայց իրենք ինձի այդպես օգնեցին:

Քննարկման մասնակիցների կողմից հիմնականում հիշատակվում են դեղերի, հագուստի, սննդի, ապրանքային քարտերի, գործիքների, տան պարագաների և այլ նմանատիպ աջակցությունների առկայության մասին: Իսկ, օրինակ, սոցիալ-հոգեբանական կամ իրավական աջակցության մասին տեղեկացվածություն գրեթե չկա, և ընտանիքները չգիտեն՝ ում դիմել նման դեպքերում:

Հիշատակված ապրանքատեսակների կամ ծառայությունների բաշխման գործընթացը կամ սկզբունքները բոլոր չորս ֆոկուս խմբային քննարկումներին մասնակից կանանց համար անհայտ էր, և որևիցե մեկ գերատեսչության կամ ծառայության կողմից այդ համակարգը երբևէ չի բացատրվել: Այսպես, օրինակ, սուպերմարկետների ապրանքային քարտերը տրվել են ընտանիքի հաշվով՝ անկախ ընտանիքի անդամների թվից: Ապրանքային քարտերի պարագայում նշվել են կոնկրետ խանութների անուններ, որոնք մատչելի չեն սիրահայ ընտանիքների համար: Դեղերի պարագայում անհայտ է՝ ինչ կատեգորիաների հիվանդների համար են նախատեսված դեղերը և ինչ կատեգորիաների համար նախատեսված չեն: Այս թեմայով ևս չկա հասանելի տեղեկատվություն:

Լրջագույն խնդիրներից է բժշկական օգնության տրամադրումը: Թեև ֆոկուս խմբային քննարկումների ընթացքում օրինակներ բերվում էին անվճար բուժօգնության մասին, բայց ակնհայտ էր, որ օգնության կարիքն ավելի մեծ է, և անվճար բուժօգնությունից օգտվում են հիմնականում ավելի պրոակտիվ և տեղեկացված մարդիկ, ովքեր կարող են հաղթահարել բյուրոկրատական քաշքուկները:

Համաձայն խմբային քննարկումների՝ օգնություն տրամադրելու ընթացքում անպարկեշտ արտահայտություններ կամ պահանջներ որևէ մեկին չեն ներկայացվել:

#### 2.2.4 Սեռական բռնություն

Ֆոկուս խմբերում քննարկվել է նաև սիրիահայ կանանց նկատմամբ սեռական ոտնձգությունների հնարավոր դրսևորումների հարցը: Երեք ֆոկուս խմբերում որևէ նման դեպք չմտաբերվեց, և միայն մեկում ներկայացվեց գործատուի կողմից անպարկեշտ առաջարկի երկու տարբեր դեպք: Նշված երկու դեպքում էլ գործը սահմանափակվել է առաջարկով:

##### **Մեջբերում ֆոկուս խմբից**

— Գնացել էր ընկերուհիս գործակալություն, որ պիտի իրեն աշխատանքի տեղավորեր: Էփպես 4000 դրամ ուզել էր, որ աշխատանքի տեղավորեր, ընկերուհիս տվել էր: Ու հետո էր ծանոթիս ուարկել էին ինչ-որ Ռան Օիլ յուղերի վաճառքի տեղ է, թե գործարան է, չգիտեմ, հիմա դրանցից շատ կա քաղաքում: Էփպես էր իմ ծանոթս գնացել էր հոտ, որ պայմաններուն ծանոթանա գործի, ասել էին, որ դու էնօր համար տի ըլլիս, որ ես քեզի հետ ժամանակ անցկացնեմ: Ու էր իմ ծանոթս, որ զարմացել է, նա ասել է. «Մի՞թե Մերին քեզի չի ասել ի սկզբանե, թե ես ինչ կուզեմ, ես երբ ուզեմ, պիտի քեզի հետ ժամանակ անցկացնեմ»: Էփ մարդը ծանոթիս ասել էր, որ իր աշխատավարձը 300 դոլար է, բայց ինչ ըսե, նա պիտի անե: Էփպես էլ չիմացա վերջը ինչ եղավ, քանի որ ինձանից նեղացավ, բայց դե ես ինչ անեի, ինձանից գործակալության համար էր ուզե, ես էլ տվել էի:

Դեպքերը ներկայացնողների կողմից հստակ մոտեցում չկա, թե նման առաջարկը պայմանավորված է գործ փնտրողի՝ փախստականի կարգավիճակով, թե՞ պարզապես գործատուի անձնային հատկանիշներով:

Մնացած դեպքերը վերաբերվում են պարզապես վաճառողների կամ տաքսիների վարորդների կողմից ինքնարժեքից բարձր գումարներ պահանջելուն, ինչը կապվում է սիրիահայերի կարգավիճակի հետ և հայաստանյան իրավիճակին ծանոթ չլինելու հանգամանքի հետ: Քննարկված մի շարք այլ դեպքերում էլ գործատուները ձգձգում են աշխատավարձերի վճարումը կամ պայմանագրեր չեն կնքում:

#### 2.2.5 Ընտանեկան բռնություն

Համաձայն ֆոկուս խմբերի մասնակից կանանց, ընտանեկան բռնության դեպքերը մեծ տարածում չունեն սիրիական ընտանիքներում, քանի որ սիրիահայ համայնքը Սիրիայում ապրել է համախմբված: Համայնքում մեկը մյուսին ճանաչել են, իսկ քանի որ բռնության դեպքերը համարվում են ամոթալի երևույթ, նման երևույթները եղել են խիստ հազվադեպ կամ թաքցվել են:

##### **Մեջբերում ֆոկուս խմբից**

— Սիրիայում չկա աղանք բամ ես չեմ հիշե, որ ամուսինը կնոջը ծեծե կամ վատ վերաբերվի, կամ չիտեմ, ուղղակի իմ շրջապատումս չկա:

— Այ Հայաստանում միանշանակ կա:

— Դե պատճառը ապրելակերպն է, հոս դժվար է ապրելը, դե դա համ էլ կնոջից է կախված, թույլ տաս մե, դե դիմացն էլ տղամարդ է,

*սահմանը որ անցնե կինը, դե մե հարվածմ կհասցեն, բայց ամեն օր ծեծելը չկա, այդ աստիճան հասած չէ:*

*— Այնտեղ ապրելը էնքան հեշտ է, այսինքն կներուն աշխատիլը անհրաժեշտ չէ:*

*— Բայց օրինակ իմ ամուսինս թույլ չէր տա, դե մենք հոն արաբներուն մեջ ենք, ոչ մեկը իրեն կնոջը չի թույլ տա, որ արաբներուն մեջ գնա աշխատի, կամ ասենք գնա հագուստ վաճառելուն տեղը աշխատի, իմ ամուսինս երբեք թույլ չի տա, կսե հոն արաբն ա կմտնի, հայն ա կմտնի, ինչ գործ ունիս:*

*— Բայց ասենք հոս ստիպված ենք աշխատիլ:*

*— Դե ասեմ, բռնություն էլ կա Սիրիայում, բաժանումներ էլ կան, բայց քիչ են, իսկ բռնությունը կրնա ըլլա, բայց բացահայտ չէ, այդ ամենը ծածկվում է: Հիմա որ համեմատես Սիրիան ու Հայաստանը, կզգաս, որ Հայաստանում կինը հարգված չէ, օրինակ տղամարդը հոս միշտ առաջն է կքայլե, իսկ սիրիայում իրար հավասար կքայլեն, իրար միասին: Հոն ընտանիքի գաղափարը կա, որը հոս չկա:*

Սիրիայում ավելի շատ ընդունված է եղել, որ տղամարդիկ աշխատեն, իսկ կանայք տանը գբաղվեն երեխաներով, իսկ Հայաստանում իրավիճակը փոխվել է, և ով կարողանում է աշխատանք գտնել, նա էլ աշխատում է: Սիրիայում ապրած հայ ընտանիքների բնական կացութաձևը հայաստանում խախտված է, և տանը նստած սիրահայ տղամարդը ընտանիքում լարվածության օջախ է հանդիսանում:

Կանանցից մեկի ամուսնու՝ վերը բերված օրինակը լայնորեն քննարկվել է ֆոկուս խմբերից մեկի ընթացքում: Նման լարվածությունը հասկանալի և բնական է համարվում կանանց կողմից, քանի որ նախկինում մարդիկ սովոր են եղել շատ վաստակելու և ավելի ակտիվ ապրելակերպի, իսկ այստեղ օրերով միայն հեռուստացույց են նայում:

Մեկ այլ գործոն է աշխարհայացքային տարբերությունը: Ըստ քննարկման մասնակիցների՝ Հայաստանում կանայք համեմատաբար ավելի կրթված են և ինքնուրույն, ի տարբերություն Սիրիայի: Սիրիահայ համայնքները Սիրիայում համախմբված են եղել եկեղեցական քրիստոնեական արժեքների շուրջ, և ընտանիքների համերաշխության միասնության գաղափարը ավելի գերակայող է եղել, քան անձնական ազատությունները, իսկ Հայաստանում իրավիճակը հակառակն է և առաջին տեղ են մղվել անձնական ազատությունները: Կանանց համար Հայաստանում գերակայություն է կրթությունը, իսկ Սիրիայում՝ ընտանիքը, և դրանով են նաև բացատրվում ընտանեկան բռնության բնույթի տարբերությունները:

### **Մեջբերում ֆոկուս խմբից**

*— Պատճառներից մեկն այն է, որ մեզ մոտ կրոնին մեծ ուշադրություն կդարձնեն, մեր մոտ քրիստոնեությունն ավելի ուժեղ է ու Աստվածն վախ կա: Հոս անաստվածություն կա, քանի որ Աստված չկա իրենց մոտ, ուրեմն վախն ալ չկա:*

Այնուամենայնիվ, առանձնագրույցի ընթացքում ֆոկուս խմբի մասնակիցներից մեկը բացատրեց իր տեսակետը սիրիահայ ընտանիքներում առկա բռնության վերաբերյալ: Ըստ վերջինիս՝ սիրիահայ ընտանիքներում բռնություն կա ու բավականին բարձր մակարդակի վրա, որը պայմանավորված է հետևյալ պատճառներով:

Նախ՝ կանայք հիմնականում չեն աշխատում ու ֆինանսապես կախում ունեն իրենց ամուսիններից, որոնք էլ, առիթից օգտվելով, շահագործում են իրենց կանանց: Կանայք էլ չեն կարող մերժել, որովհետև հակառակ դեպքում ամուսիններն իրեց դուրս կանեն տնից առանց ֆինանսների, քանի որ ամբողջ ունեցվածքը ամուսնու անունով է: Իսկ կանայք չեն աշխատում, որովհետև հիմնականում ստանում են միջնակարգ կրթություն և չեն մասնագիտանում:

**Մեջբերում ֆոկլուս խմբից**

— Համ էլ հոն ամեն ինչ կայբանվեր, մաքրությունից սկսած կայբանվեր: Շատ մեծ ուշադրություն կդարձնեն մաքրությանը, քաղաքավարությանը, ասենք հոս ավելի մեծ ուշադրություն կդրաձնեն ուսմանը, իսկ հոն ուսմանը այդքան մեծ ուշադրություն չեն դրաձնե: Կինը հոն պիտի ավանդույթները պահպանե, պեպք է կատարյալ ըլլա տանը մեջ: Հոս միայն ուսում, ուսում, ինքելեկտր առաջնային է, մի քանի վկայականներ պիտի ունենաս, իսկ սիրիահայ կինը մի քանի վկայականներ չունի:

Մյուս կողմից, կանայք չեն կարող բռնության դեմ ոչինչ անել, որովհետև հայկական համայնքը շատ փոքր է, բոլորը բոլորին գիտեն: Քանի որ ընտանիքի արժեքը շատ բարձր է այնտեղ, եթե բաժանվեն, ապա համայնքով մեկ «խայտառակ» կլինեն , որից հետո էլ չեն կարողանա նոր ընտանիք կազմել, հետևաբար հարմարվում են իրավիճակին: Միևնույն ժամանակ, չնայած բոլորի տանը նույն խնդիրը կա, բայց բոլորը թաքցնում են բռնության դրսևորումները և ցույց տալիս, որ իրենք շատ երջանիկ են:

### 3 Եզրահանգումներ

#### 3.1 Քանակական հարցման արդյունքներ

- Սիրիայի տարածքում կանանց 15%-ը ենթարկվել է բռնությունների առնվազն մեկ անգամ:
- Կանանց 15%-ը (30 դեպք) նշել է վախերի, հոգեբանական բարդությունների մասին, որոնք արդյունք են վերապրած բռնարարքների: Եվս 1.5% նշել են նաև ֆիզիոլոգիական բարդությունների մասին:
- Վախերի, հոգեբանական կամ ֆիզիոլոգիական բարդությունների մասին նշած կանանց 70%-ը (23 դեպք) միջադեպի մասին կիսվել է այլ մարդկանց հետ: Մնացածը կարիք չեն զգացել կիսվելու կամ ցանկացել են մոռանալ:
- Գրանցվել են զենքով ահաբեկման դեպքեր, որոնք կազմում են 11% (21 դեպք), կրակոցներ կամ դանակահարություն վերապրել են 4%-ը (8 դեպք), զրկվել են սննդից և ջրից 3.5%-ը (5 դեպք):
- Դեպքերի ճնշող մեծամասնությունում բռնություն գործադրողը Սիրիայի ապստամբ բանակի ներկայացուցիչներն են (74%):
- Հայաստանի տարածքում որևէ տեսակի բռնության մեկ կամ մեկից ավել անգամ ենթարկվել են հարցվածների 3%-ը:
- Սիրիայից Հայաստան տեղափոխվելու ընթացքում այլ երկրների տարածքում գրանցվել է բռնության երեք դեպք (1.5%):
- Սիրիայի տարածքում, ըստ հարցման տվյալների, որևէ մեկի նկատմամբ սեռական բռնություն չի կիրառվել, բացառությամբ մեկ դեպքի, երբ կնոջ մարմնում ինչ-որ բան են փնտրել:



- Հայաստանում նույնպես գրանցվել է սեռական բռնության մեկ դեպք (սեռական օրգանները շոշափել):
- Ներկա ամուսնու կողմից բռնության դեպքերի առկայության մասին ներկայացրել են հինգ կին (2.5%):
- Ընդհանուր առմամբ կանանց մեծամասնությունը (69.7%) կարծում է, որ ընտանեկան բռնության խնդիրներն ավելի լավ են կարգավորվում նեղ անձնական շրջանակում, քան ոստիկանության կողմից: 10%-ը նման կարծիքի չէ, իսկ 20%-ը հստակ դիրքորոշում չունի:
- Կանանց 64.9%-ը չգիտի, թե արդյո՞ք դատական համակարգը բավարար ջանքեր գործադրում է բռնության ենթարկված կանանց պաշտպանության համար:
- Հայաստանում ընտանեկան բռնության խնդրի տարածված լինելու մասին հաստատում են հարցվածների 41.3%-ը, հերքում՝ 11.3%-ը, սակայն ավելի շատ թվով մարդ այս հարցի պատասխանը չունի (47.4%)
- Կանանց մեծամասնությունը (72.5%) հերքում է այն պնդումը, ըստ որի հայկական հասարակությունը բացասական վերաբերմունք ունի կին փախստականների և ապաստան հայցողների նկատմամբ և միայն ամեն հինգերորդն է (20.5%) համաձայնվել նման ձևակերպման հետ:
- Ըստ կանանց 58.5%-ի՝ Հայաստանի իշխանությունները բավարար ջանքեր չեն ներդնում փախստականների և ապաստան հայցողների խնդիրները լուծելու ուղղությամբ կարծում իսկ 17%-ը այս կարծիքին չէ
- Կանայք տարակարծիք են և միանշանակ մոտեցում չունեն այն հարցին, թե արդյո՞ք Հայաստանի իշխանությունները պաշտպանում են փախստականների և ապաստան հայցողների շահերը: Այսպիսով, վերը նշված հարցին չի կարողացել պատասխանել 40.5%-ը, 34%-ը համաձայնվել է իսկ 25.5%-ը չի համաձայնվել:
- Հարցմանը մասնակից կանայք համեմատաբար ավելի տեղեկացված են անվճար առողջապահական ծառայություններից (62.5%), սննդի (69.5%) և ոչ սննդային պարագաների (61%) բաշխման ծառայություններից:
- Կանանց շրջանում տեղեկացվածությունն այնպիսի ծառայությունների վերաբերյալ, ինչպիսիք են կանանց կամ երեխաների կենտրոնները, անվտանգության կամ իրավական, ինչպես նաև հոգեկան առողջության և սոցիալ-հոգեբանական աջակցության կենտրոնները չեն կազմում 12%-ից ավել,
- Առողջապահական ծառայություններից օգտվել են հարցվածների 55%-ը, սնունդ ստացել՝ 68%-ը, ոչ սննդային պարագաներ՝ 55%-ը:
- Երեխաների կենտրոնների ծառայություններից օգտվել են 5.5%-ը:
- Անվտանգության հետ կապված հարցերով խորհրդատվություն ինչպես նաև հոգեկան առողջություն և սոցիալ հոգեբանական աջակցություն (ՀԱՍՀԱ) են ստացել ոչ ավել քան 2%-ը:
- Կանանց մեծամասնությունը (71.5%) իրեն չի համարում մերժված և օտարված հայաստանյան հասարակությունում: միևնույն ժամանակ ամեն չորրորդ կին (26%) իրեն զգում է օտարված:
- Ըստ քանակական հարցման տվյալների, ամեն երկրորդ կին (55.6%) փաստել է, որ իր երեխան կողմնակալ վերաբերմունքի է արժանանում համադասարանցիների և ուսուցիչների կողմից՝ փախստական լինելու պատճառով: 28%-ը այս հարցում հստակ դիրքորոշում չունի, և միայն 15.7%-ը համաձայն չի նման պնդման հետ: Ֆոկուս խմբային քննարկումները ցույց են տալիս նույնական պատկեր ուսուցիչների պարագայում:

### 3.2 Որակական հարցման արդյունքներ

- Նախադպրոցական կրթության պարագայում սիրիահայ ընտանիքների առաջ ծառայած հիմնական խնդիրը բյուրոկրատական քաշքշուկներն են:

- Ֆոկուս խմբային քննարկումների մասնակից կանայք առանձնակի կարևորում են դպրոցի ուսուցիչների վերաբերմունքը երեխաներին սահուն դասապրոցես հնտեգրելու հարցում:
- Աշխատանքի հետ կապված քննարկված օրինակների մեծ մասում, երբ մարդիկ կարողացել են գտնել աշխատանք, խոսքը գնացել է վարսավիրի, ավտոմեխանիկի, ռեստորաններում աշխատանքի և այլ նմանատիպ աշխատանքների մասին, որտեղ վարձատրությունը կամ եկամուտը ցածր է և չի բավականացնում ընտանիքների առօրյա ծախսերի համար:
- Ֆոկուս խմբային քննարկումներից պարզ դարձավ, որ ծառայությունների կամ ապրանքների բաշխման գործընթացը չափազանց անկազմակերպ է իրականացվում:
- Կազմակերպություններից քչերն են կապվում սիրիահայերի հետ՝ տեղեկացնելու այս կամ այն օգնության մասին, և հաճախ սիրիահայ ընտանիքները պատահականորեն են իմանում բաժանվող օգնության մասին:
- Համաձայն խմբային քննարկումների՝ հումանիտար օգնություն տրամադրելու ընթացքում անպարկեշտ արտահայտություններ կամ պահանջներ որևէ մեկին չեն ներկայացվել:

#### 4 Գրականության ցանկ

- EGEP. (2011). National Situation Analysis Report: Women's Human Rights and Gender Equality. Syria.
- TBILISSI. (2014, December 12). The Economist. Retrieved January 27, 2014, from [www.economist.com](http://www.economist.com):  
<http://www.economist.com/blogs/easternapproaches/2013/12/syrian-armenians-armenia>
- UNHCR. (2014). Sexual and Gender-Based violence against Refugees, Returnees and Internally displaced Persons- UNHCR Guidelines for Prevention and Response. UNHCR.
- UNHCR. (2014). Syria Regional Refugee Response. UNHCR.

## Հավելված 1

### Ե՞րբ է Ձեր ընտանիքը ժամանել Հայաստան

|          | Հաճախություն | Տոկոս |
|----------|--------------|-------|
| 2011     | 4            | 2.0   |
| 2012     | 131          | 65.5  |
| 2013     | 65           | 32.5  |
| Ընդամենը | 200          | 100   |

### Ձեր տարիքը:

|                  |         |
|------------------|---------|
| Միջին            | 41.8788 |
| Նվազագույն թիվ   | 18      |
| Առավելագույն թիվ | 88      |

### Ձեր ընտանիքի անդամների թիվը.

|                  |       |
|------------------|-------|
| Միջին            | 4.215 |
| Նվազագույն թիվ   | 1.    |
| Առավելագույն թիվ | 14    |
| Ընդամենը         | 843   |

### Դու՞ք եք ընտանիքի գլխավորը:

|       |             | Հաճախություն | Տոկոս | Վավեր տոկոս |
|-------|-------------|--------------|-------|-------------|
| Վավեր | Այո         | 38           | 19.0  | 19.0        |
|       | Ոչ          | 156          | 78.0  | 78.0        |
|       | Հավասարապես | 6            | 3.0   | 3.0         |
|       | Ընդամենը    | 200          | 100.0 | 100.0       |

### Կանանց կրթությունը

|                                    | Հաճախություն | Տոկոս |
|------------------------------------|--------------|-------|
| Առանց կրթության                    | 2            | 1.0   |
| Տարրական                           | 26           | 13.0  |
| Միջնակարգ                          | 56           | 28.0  |
| Ավագ դպրոց                         | 39           | 19.5  |
| Բակալավր                           | 73           | 36.5  |
| Մագիստրոս և հետբուհական կրթություն | 1            | .5    |
| Միջին մասնագիտական                 | 3            | 1.5   |
| Ընդամենը                           | 200          | 100.0 |

### Կանանց ամուսնական կարգավիճակը.

|                     | Հաճախություն | Տոկոս |
|---------------------|--------------|-------|
| Չամուսնացած         | 38           | 19.0  |
| Ամուսնացած          | 136          | 68.0  |
| Ամուսնալուծված      | 5            | 2.5   |
| Այրի                | 20           | 10.0  |
| Բնակվում եք առանձին | 1            | .5    |
| Ընդամենը            | 200          | 100.0 |

**Հաշմանդամություն ունե՞ք:**

|          |              | Հաճախություն | Տոկոս | Վավեր տոկոս |
|----------|--------------|--------------|-------|-------------|
| Վավեր    | Այո          | 3            | 1.5   | 1.5         |
|          | Ոչ           | 192          | 96.0  | 98.5        |
|          | Ընդամենը     | 195          | 97.5  | 100.0       |
|          | Բացակա տվյալ | 5            | 2.5   |             |
| Ընդամենը |              | 200          | 100.0 |             |

**Եթե այո, ստանո՞ւմ եք պետական որևէ նպաստ**

|          |              | Հաճախություն | Տոկոս | Վավեր տոկոս |
|----------|--------------|--------------|-------|-------------|
| Վավեր    | Այո          | 1            | .5    | 33.3        |
|          | Ոչ           | 2            | 1.0   | 66.7        |
|          | Ընդամենը     | 3            | 1.5   | 100.0       |
|          | Բացակա տվյալ | 197          | 98.5  |             |
| Ընդամենը |              | 200          | 100.0 |             |

**Բնակության նախքան վայրը հակամարտությունը**

|       |            | Հաճախություն | Տոկոս | Վավեր տոկոս |
|-------|------------|--------------|-------|-------------|
| Վավեր | Մայրաքաղաք | 11           | 5.5   | 5.5         |
|       | Քաղաք      | 187          | 93.5  | 93.5        |
|       | Գյուղ      | 2            | 1.0   | 1.0         |
|       | Ընդամենը   | 200          | 100.0 | 100.0       |

**Բնակության վայրը Հայաստանում**

|       |            | Հաճախություն | Տոկոս | Վավեր տոկոս |
|-------|------------|--------------|-------|-------------|
| Վավեր | Մայրաքաղաք | 198          | 99.0  | 99.0        |
|       | Գյուղ      | 2            | 1.0   | 1.0         |
|       | Ընդամենը   | 200          | 100.0 | 100.0       |

**Քանի՞ սենյակ ունի Ձեր կացարանը:**

|                  |      |
|------------------|------|
| Միջին            | 2.23 |
| Նվազագույն թիվ   | 1    |
| Առավելագույն թիվ | 5    |

**Ընտանիքի՝ Հայաստանում գտնվող անդամների թվաքանակը**

|                  |       |
|------------------|-------|
| Միջին            | 3.665 |
| Նվազագույն թիվ   | 1     |
| Առավելագույն թիվ | 7     |
| Գումար           | 733   |

**Բնակվո՞ւմ եք արդյոք այլ ընտանիքի հետ համատեղ Ձեր ներկա կացարանում**

|          |              | Հաճախություն | Տոկոս | Վավեր տոկոս |
|----------|--------------|--------------|-------|-------------|
| Վավեր    | Այո          | 70           | 35.0  | 35.4        |
|          | Ոչ           | 128          | 64.0  | 64.6        |
|          | Ընդամենը     | 198          | 99.0  | 100.0       |
|          | Բացակա տվյալ | 2            | 1.0   |             |
| Ընդամենը |              | 200          | 100.0 |             |

**Քանի՞ ընտանիքի հետ եք կիսում կացարանը:**

|   |            |    |
|---|------------|----|
| N | Առկա տվյալ | 85 |
|---|------------|----|

|                  |              |        |
|------------------|--------------|--------|
|                  | Բացակա տվյալ | 115    |
| Միջին            |              | 1.2824 |
| Նվազագույն թիվ   |              | 0      |
| Առավելագույն թիվ |              | 3      |
| Գումար           |              | 109    |

**Ընդհանուր առմամբ քանի՞ մարդ է բնակվում Ձեր կացարանում:**

|                  |        |
|------------------|--------|
| Միջին            | 4.9078 |
| Նվազագույն թիվ   | 2      |
| Առավելագույն թիվ | 10     |

**Ձեր ընտանիքում կա՞ն երեխաներ (18 տարեկանից փոքր):**

| Տղաներ   |         |              |       |
|----------|---------|--------------|-------|
|          |         | Հաճախություն | Տոկոս |
| Վավեր    | 1 տղա   | 57           | 28.5  |
|          | 2 տղա   | 23           | 11.5  |
|          | 3 տղա   | 2            | 1.0   |
|          | Չկան    | 118          | 59    |
| Ընդամենը |         | 200          | 100.0 |
| Աղջիկներ |         |              |       |
|          |         | Հաճախություն | Տոկոս |
| Վավեր    | 1 աղջիկ | 61           | 30.5  |
|          | 2 աղջիկ | 22           | 11.0  |
|          | 3 աղջիկ | 1            | .5    |
|          | Չկան    | 116          | 58.0  |
| Ընդամենը |         | 200          | 100.0 |

**Քանի՞ դպրոցահասակ տղա կա Ձեր ընտանիքում և նրանցից քանի՞սն են հաճախում դպրոց**

|          |              | Հաճախություն | Տոկոս |
|----------|--------------|--------------|-------|
|          | Հաճախում են  | 70           | 86.4  |
|          | Չեն հաճախում | 11           | 13.6  |
| Ընդամենը |              | 81           | 100   |

**Քանի՞ դպրոցահասակ աղջիկ կա Ձեր ընտանիքում և նրանցից քանի՞սն են հաճախում դպրոց**

|          |              | Հաճախություն | Տոկոս |
|----------|--------------|--------------|-------|
|          | Հաճախում են  | 69           | 95.8  |
|          | Չեն հաճախում | 3            | 4.2   |
| Ընդամենը |              | 72           | 100   |

**Սիրիայից ներգաղթելու Ձեր ուղին**

|   | Պատասխաններ |       | Դեպքերի տոկոս |
|---|-------------|-------|---------------|
|   | N           | Տոկոս |               |
| Սիրիայից անմիջապես ժամանել եք ներկա բնակավայրը Հայաստանում                    | 107         | 41.3% | 53.5%         |
| Ներկա բնակավայր հասել եք Սիրիայի և Հայաստանի այլ քաղաքներ և գյուղեր անցնելով: | 24          | 9.3%  | 12.0%         |
| Վրաստանով   | 58          | 22.4% | 29.0%         |
| Թուրքիայով  | 58          | 22.4% | 29.0%         |
| Արաբական Էմիրություններով   | 5           | 1.9%  | 2.5%          |
| Լիբանանով   | 7           | 2.7%  | 3.5%          |

|          |     |        |        |
|----------|-----|--------|--------|
| Ընդամենը | 259 | 100.0% | 129.5% |
|----------|-----|--------|--------|

**Ձեր հիմնական զբաղվածությունը նախքան հակամարտությունը և հիմա**

|                                | Սիրիա        |       | Հայաստան     |       |
|--------------------------------|--------------|-------|--------------|-------|
|                                | Հաճախություն | Տոկոս | Հաճախություն | Տոկոս |
| ուսանողուհի                    | 14           | 7     | 10           | 5     |
| տնային տնտեսուհի               | 129          | 64.5  | 167          | 83.5  |
| սպասարկման ոլորտ               | 18           | 9     | 15           | 7.5   |
| ուսուցչուհի                    | 15           | 7.5   | 2            | 1     |
| գրասենյակային աշխատող/գործարար | 18           | 9     | 5            | 2.5   |
| բուժ աշխատող                   | 6            | 3     | 1            | 0.5   |
| Ընդամենը                       | 200          | 100   | 200          | 100   |

**Ձեր ընտանիքի քանի՞ անդամներ ունեին վճարվող աշխատանք Սիրիայում նախքան հակամարտությունը**

|                            | Հաճախություն |     |           | Տոկոս |
|----------------------------|--------------|-----|-----------|-------|
|                            | Տղամարդ      | Կին | Ընդհանուր |       |
| Այլ                        | 12           | 3   | 15        | 6.7   |
| Մշակույթ                   | 3            |     | 3         | 1.3   |
| Կրթություն                 | 5            |     | 5         | 2.2   |
| Շինարարություն             | 6            |     | 6         | 2.7   |
| Տրանսպորտ                  | 7            | 1   | 8         | 3.6   |
| Հյուրանոցներ և ռեստորաններ | 8            | 7   | 15        | 6.7   |
| Հանքագործություն           | 11           |     | 11        | 4.9   |
| Առողջապահություն           | 11           |     | 11        | 4.9   |
| Սպասարկման ոլորտ           | 13           | 2   | 15        | 6.7   |
| Կոմունալ ծառայություններ   | 14           |     | 14        | 6.2   |
| Արհեստագործություն         | 25           |     | 25        | 11.1  |
| Մշակող արդյունաբերություն  | 38           | 2   | 40        | 17.8  |
| Մեծածախ և մանրածախ առևտուր | 39           | 18  | 57        | 25.3  |
| Ընդամենը                   | 192          | 33  | 225       | 100   |

**Արդյո՞ք Ձեր ընտանիքից որևէ մեկն ունեցել է վճարվող աշխատանք Հայաստանում վերջին ամիսվա ընթացքում:**

|       |       | Հաճախություն | Տոկոս |
|-------|-------|--------------|-------|
| Վավեր | Այո   | 100          | 50.0  |
|       | Ոչ    | 100          | 50.0  |
|       | Total | 200          | 100.0 |

**Եթե այո, ապա ո՞ր ոլորտում:**

|                        | Հաճախություն |     |           | Տոկոս |
|------------------------|--------------|-----|-----------|-------|
|                        | Տղամարդ      | Կին | Ընդհանուր |       |
| Այլ                    | 1            | 1   | 2         | 1.6   |
| Տնային ծառայություններ | 0            | 4   | 4         | 3.3   |

|                                |    |    |     |       |
|--------------------------------|----|----|-----|-------|
| Մշակույթ                       | 2  | 0  | 2   | 1.6   |
| SS ոլորտ                       | 2  | 2  | 4   | 3.3   |
| Շինարարություն                 | 3  | 0  | 3   | 2.4   |
| Առողջապահություն               | 3  | 1  | 4   | 3.3   |
| Կոմունալ ծառայություններ       | 4  | 0  | 4   | 3.3   |
| Տրանսպորտային հաղորդակցություն | 5  | 1  | 6   | 4.9   |
| Հյուրանոցներ և ռեստորաններ     | 7  | 9  | 16  | 13.0  |
| Արհեստագործություն             | 13 | 2  | 15  | 12.2  |
| Սպասարկման ոլորտ               | 13 | 7  | 20  | 16.3  |
| Մեծածախ և մանրածախ առևտուր     | 15 | 9  | 24  | 19.5  |
| Մշակող արդյունաբերություն      | 19 | 0  | 19  | 15.4  |
| Ընդամենը                       | 87 | 36 | 123 | 100.0 |

### Ընտրեք ֆինանսական օժանդակության այլ աղբյուրները

|  | Պատասխաններ |        | Դեպքերի տոկոս |
|--|-------------|--------|---------------|
|  | N           | Տոկոս  |               |
| Հայաստանում հանգրվանելուց առաջ կուտակած խնայողություններ | 132         | 46.2%  | 66.3%         |
| Հայաստանցի բարեկամներ                                    | 38          | 13.3%  | 19.1%         |
| Հայաստանի իշխանությունները                               | 12          | 4.2%   | 6.0%          |
| Հասարակական կազմակերպությունները                         | 51          | 17.8%  | 25.6%         |
| Դրամական փոխանցումներ                                    | 35          | 12.2%  | 17.6%         |
| Անհատ ձեռներությունից                                    | 1           | .3%    | .5%           |
| Ազգականի աշխատավարձով ենթ ապրում                         | 5           | 1.7%   | 2.5%          |
| Անհատ բարերարից  | 2           | .7%    | 1.0%          |
| Միջազգային կազմակերպությունները                          | 2           | .7%    | 1.0%          |
| Աշխատավարձը  | 8           | 2.8%   | 4.0%          |
| Ընդամենը   | 286         | 100.0% | 143.7%        |

### Ընտանիքի ամսական ծախսերը

|                      | ՀՀ դրամ | Տոկոս |
|----------------------|---------|-------|
| Մնունդ               | 107261  | 42    |
| Վարձավճար            | 82320   | 33    |
| Առողջապահական ծախսեր | 16770   | 7     |
| Կրթական ծախսեր       | 7803    | 3     |
| Կոմունալ ծախսեր      | 23882   | 9     |
| Տրանսպորտ            | 14848   | 6     |
| Ընդամենը             | 252884  | 100   |

### Հայաստանում Ձեր բնակավայրում հասանելի ինչպիսի՞ ծառայությունների մասին եք տեղյակ:

|  | Տեղյակ չեն |   | Օգտվել են |   | Օգտվելու կարիք չունեն |   | Օգտվելու կարիք չունեն բայց չեն կարողացել օգտվել |   |
|--|------------|---|-----------|---|-----------------------|---|---|---|
|  | N          | % | N         | % | N                     | % | N   | % |
|  |            |   |           |   |                       |   |   |   |

|                       |     |    |     |    |    |     |    |      |
|-----------------------|-----|----|-----|----|----|-----|----|------|
| Առողջապահություն      | 50  | 25 | 110 | 55 | 15 | 7.5 | 25 | 12.5 |
| Մնունդ                | 49  | 25 | 136 | 68 | 3  | 1.5 | 12 | 6    |
| Ոչ սննդային պարագաներ | 56  | 28 | 110 | 55 | 12 | 6   | 22 | 11   |
| Կանանց կենտրոն        | 192 | 96 | 0   | 0  | 6  | 3   | 2  | 1    |
| Երեխաների կենտրոն     | 186 | 93 | 11  | 6  | 2  | 1   | 1  | 0.5  |
| Անվտանգություն        | 177 | 89 | 4   | 2  | 19 | 9.5 | 0  | 0    |
| ՀԱՍՀԱ                 | 196 | 98 | 1   | 1  | 3  | 1.5 | 0  | 0    |
| Իրավական օգնություն   | 183 | 92 | 1   | 1  | 14 | 7   | 2  | 1    |

**Սիրիայում ընտանիքից դուրս տեղի ունեցած բռնության դեպքերի հաճախականությունը:**

|  | N  | %    |
|--|----|------|
| Ինձ ահաբեկել են որևէ տեսակի զենքով   | 21 | 10.5 |
| Ինձ վրա կրակել են կամ դանակահարել են                                       | 8  | 4    |
| Ինձ զրկել են սննդից, ջրից, քնից  | 5  | 2.5  |
| Ինձ հարկադրել են դիտել մեկ այլ անձի հանդեպ կիրառված ֆիզիկական բռնությունը: | 4  | 2    |
| Իմ հանդեպ անվայել սեռական բնույթի դիտողություններ են հնչել:                | 4  | 2    |
| Ինձ ֆիզիկական վնաս են պատճառել:  | 2  | 1    |
| Իմ մարմնի սեռական հատվածները շոշափվել են:                                  | 1  | 0.5  |
| Ինձ անցանկալի համբուրել են:  | 1  | 0.5  |
| Իմ մարմնի խոռոչներում որոնում է կատարվել:                                  | 1  | 0.5  |
| Ինձ ծեծել են կամ ոտքով հարվածել:   | 1  | 0.5  |
| Ինձ ապտակել են կամ հարվածել:   | 1  | 0.5  |

**Եթե այո, ապա ո՞վ է եղել բռնություն գործադրողը**

|                                 | N  | %   |
|---------------------------------|----|-----|
| ապստամբները                     | 25 | 74  |
| անհայտ անձիք                    | 4  | 12  |
| ոստիկանը                        | 1  | 3   |
| ոմն Գազիկ Խաչիկյան              | 1  | 3   |
| մաքսային ծառայության աշխատակիցը | 1  | 3   |
| տաքսու վարորդը                  | 1  | 3   |
| մեզ ջրից զրկել են               | 1  | 3   |
|                                 | 34 | 100 |



## Հավելված 2 Սիրահայերի կողմից արված առաջարկներ

1. Օգնեն աշխատանքով
2. Կացարան տրամադրեն
3. Օգնեն տան վարձով
4. Օգնեն սննդով
5. Օգնեն կոմունալ վճարներով
6. Օգնեն ծնեռային հագուստով
7. Օգնեն գումարով
8. Օգնեն ուսման վարձով
9. Օգնեն կրթություն ստանալ
10. Օգնությունը հավասար բաշխեն
11. Փախստականների համար նախատեսված ծրագրերը բոլորին չեն տեղեկացնում
12. Օգնեն բիզնես ստեղծել
13. Հոգեբանի աջակցություն
14. Երեխաներին լեզու սովորացնեն
15. Աշխատավարձերը բարձրացնեն
16. Ապահովեն դեղորայքով
17. Օգնեն Հայաստանից գնալ
18. Հանդիպումներ կազմակերպեն սիրահայերի ու հայերի հետ
19. Աշխատանքի տեղավորելու ուրիշ գումար են խոստացել, իռականում այլ գումար են տվել
20. Դպրոցներում դրամահավաք են անում
21. Ավելացնեն դրամական աջակցությունը
22. Հիվանդանոցներում ծառ. Որակը բարձրացնեն
23. Կանանց համար շփման համապատասխան միջավայր ստեղծեն (ճաշկերույթներ, ծեռքի աշխատանք)
24. Օգնությունները ավելի հարմար և մատչելի լինի ստանալ
25. Երեխաներին ապահովեն մասնագիտական անվճար ծառ.
26. Ազատեն հարկերից
27. Օգնեն մնացած բարեկամներին բերենք Հայաստան
28. Մեր օգնությունը տալիս են ուրիշներին
29. Բանակ չտանեն
30. ՄԱԿ-ը ինքը հետևի իր օգնություններին, ոչ թե ուրիշ կազմակերպություններին հանձնարարի
31. Ազատեն տրանսպորտային ծախսերից
32. Հարկային արտոնություններ տան բիզնես սկսելու համար
33. Մենդի օգնությունը անհատական լինի յուրաքանչյուր ընտանիքի համար, ոչ թե բոլորին նույն բանը տան
34. Նախատեսված աջակցությունը տրվի անմիջապես շահառուներին
35. Լուծեն ՀՀ քաղաքացիության հարցերը կարճ ժամկետներում
36. Աշխատանքում ռուսերենի իմացությունը պարտադիր չլինի
37. Գումար տան, ոչ թե City-ի քարտ
38. Տեղի բնակիչները և պետ.ծառայողները շատ վատ են վերաբերվում մեզ
39. ՍՆ-ը ինչպես Եվրոպայում, այնպես էր այստեղ օգնի փախստականներին
40. Մեզ փախստական մի ասեք
41. Կրթության որակը բարձրացնել
42. Փաստաթղթերս մնացել է Սիրիայում, այնտեղ 2-րդ կուրսի ուսանող էր, աստեղ չեմ կարողանում շարունակել ուսումս
43. Սիրահայերի կենտրոն ստեղծեն, որտեղ կարողանանք միմյանց հանդիպել, զրուցել, մեզ իրազեկեն մեր իրավունքների մասին
44. Այն սնունդը որ մեզ տալիս են, մենք չենք կարողանում ուտել, առաջարկում եմ սնունդի փոխարեն գումարը տալ
45. Մանկապարտեզներում տեղ չկա
46. Լուծեն գրանցման հարցը, քանի որ վարձով են ապրում, չեն կարողանում գրանցվել
47. Դրամական կուպոնների փոխարեն կանխիկ գումար տան
48. Ազատ տարածքներից անվճար տրամադրեն սիրահայերին
49. Ուշադիր լինեն մեր նկատմամբ
50. Օգնեն լեզու սովորենք
51. Հոգեբանական աջակցություն
52. Ինֆորմացիայի պակաս
53. Իրավունք տան Սիրիացիներին իրենց գումարով գործարան բացեն

54. Լինի մանկապարտեզ սիրիահայ երեխաների համար
55. Շատերը բողոքում են որ դիմել են տարբեր տեղեր և օգնություն չեն ստացել (դրամ, հագուստ, դեղորայք, կացարան, փաստաթղթային)
56. Շատ բողոքում են, որ իրենց հասանելի օգնությունը յուրացվում է աշխատողների կողմից (իրենք իրենց աչքով են տեսել)